 Գուք էլ խօմ Գախկըցի իք: (Կանգ է աւան-ժ:)
 Գուք ինձ գըցում իք ջուքում...
 Ի՛ս ձիր օփթէմէն գու՛քամ
 Ու կու աւելցնիմ ինձմէն՝
 — Սաղ աշխարքն է աւազակ,
 Գուք իք իտակ ջրբեմէն...
 Սէ-մէ նուգբար օրինակ...

Վարագայրը իջնա՛մ է:



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Բենք ներկայացնում է մի խղճուկ սենեակ իւր անշուք կան-կարասիքով: Ձախ կողմը՝ հասարակ գորգով ծածկած տախտ, նեղ նահալով եւ մութաքաներով. աջ՝ հասարակ սեղան իւր արտուներով. խոքրում՝ հասարակ գորգով ծածկած մի փոքր տախտ իւր փոքրիկ քառանկիւնի նահալով: Բենի ձախ կողմը՝ մեջ տեղը պատուհան (դուռ) սպիտակ վարագուրով ծածկած. անկիւնում՝ վառարան. աջ կողմը՝ մի դուռը անկիւնի մօտ. խոքրում՝ մի լուսամուտ մեջ տեղը եւ մի դուռը վառարանի մօտ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԴԱՏՕ. Հանդիսականների ղէմ
տախտի վրայ նստած լուսամուտի մօտ քարգաճի առաջ:

Տրվուր ու բոլորիկ նրստած

Գիշեր-ցերեկ գիփ կարէ,

Խան կուշտ փուրով, խան քախցած...

Բախտ է, թէ գահրումար է:

Կրտուր փէտ էլ չ'ունենաս,

Վուր մէ բուխարը վառիս,

Կըշտին կանգնիս ու տարնաս,

Նուրմէկանց նրստիս, կարիս:

Մատնիրս մըխկըտում է.

Յըրտեմէն չ'իմ կանացի

Ասղումը թիլ անց կացնի.

Կ'օսիս օմբին բօթում է:

Վ.Տ.Ր աստղի տակն իմ ծընեի,

Ան օվ է էլի մամէս,
 Օ՛վ է ինձ մարթու տըւի,
 Ի՞նչ զըրգւեցայ մարթումէս,
 Էստունք միտըս չ'է գալի:
 Ի՛ս ինչ խիւքի իմ էկի,
 Գըռնէդուռն իմ ման գալի
 Իմ էրեխանցով մէտի:
 Դիփունանքն ինձ ասիլ ին.
 «Ի՛նչ, սիրուն վուրփեւէրի»,
 Ուտեցրիլ ին, հաքցրիլ ին,
 Իժում մըսիրքս ին կերի: (Երգած է):
 Հէրս ու մէրս ի՛նչ անին,
 Իմ ճակտին էս էր գըրած: Ս... է Ս...

Տ Ե Ս Ի Լ Բ:

ՆԱՏՕ, ՄԱԼԱԼ.

ՄԱԼԱԼ, մտնելով աջ դռնից,
 հանում է կոնատակից մի փոքրիկ բոխչա և ձգում նատօի
 առաջ, իսկ իւր վրայի տալման՝ աթոռի վրայ, յուզուած:
 Գիդենաս, խիտ իմ ջըգրած...
 Ո՛ւմ դուռն ասիս ծեծեցի,
 Ո՛ւմ բագն ասիս տուն մըտայ,
 Ո՛ւմն ասիս գըղզըղեցի,
 Մագրամ առնող չը գըլթայ:
 Քու կարած աղըխնիրը
 Չէրիտ էսօր միզ թիքայ...
 Հէնց բաց արի գըռնիրը,
 Մէ իրիցի սաստ էկայ.

Գիդէի, վուր խէր չի գա:
 Նատ հունըրնիր բանեցրի,
 Դիւի քաղակ կըտըրեցայ,
 Նատերուն էլ բեզրեցրի,
 Վիւրը ինքս էլ լէթեցայ:
 Խան դէս, խան դէն շուռ տըւի,
 Ու՛մ ճակտին ասիս կըպցրի—
 Տէրտէրի ջանը մաշի—
 Վունչիչ չը սիպտըկեցրի:
 Լաւ լաւը կի ուտեցրի
 Էն քու լմիոշ կատօին.
 Գըլխիս բերում էր օին...
 Դիմցի նրա արարմունքին.
 Էն մէ թիզ խախկուհի՞ս պուպրին
 Էսօր դառիլ է օմքին.
 Նա, էն սիւ ալիշ, կուպրին:
 Լամիս ջըգրեմէս տրաքեցայ...
 Իժում կի խիտ փոշիմնեցայ:
 Արի ու նրան մի գովի.
 Հաքին գօլ խարա մօլի,
 Տախտին նըստած արխային
 Մընում էր իր Սաքօին: (Յագ-սց հանելով):
 Թէ կու բանի քու բախտը,
 Չիս ըլի նրամէն պակաս...
 Դուն էլ զուքի էն վախտը
 Կու՛լիս սիրուն նորահարս:
 Ումն ասիս, կու բերիս մարս...
 ՆԱՏՕ, յուզուած:
 Նէտալի կի գիդենամ,

Թէ ինչն է քի խօսեցնում:
 Զ'իս ուզում քի մօզ կենան,
 Վո՛ւրթիքս ին քի բեզրեցնում,
 Կարճ ասան՝ զի կաց, գրնան,
 Ի՛ս էլ կէհամ, չիմ մընա...
 Ծամբա-ուծում մասխարա
 Օչովինը չիմ դառնա:

ՄԱԼԱԼ, ձեռքերը խաղացնե-
 րով:

Դիմպլիպիտո — նազարա,
 Մալալ, զի կաց, խաղ արան:
 Ուզում իմ բախտաւորի,
 Սա ինչիր է մօգօնում:
 Քիզպէս շատ վուրփեւէրի
 Ասիլ է՝ մարթ չիմ ուզում,
 Մագրամ իժում փափկիլ է,
 Դօշ ու գօտկով դուբիլ է:
 Զ'իմ ուզի ու ջիբքս դի,
 Աշխարքն էտէնց է, վո՛ւրթի:

ՆԱՏՕ:

Էսքան տարի քանիսին
 Արիլ իս աչէմէբա,
 Գընում ին ու գալիս ին
 Վունցոր մէ մօջլէնէբա,
 Վիրջը ինչ է դուս գալի:
 Անց ին կենում, գընում ին,
 Ի՛փոր ինձ ուստ ին գալի,
 Զուստ մէ ճանփէն ծըռում ին:
 Էրեսը շուս ին տալի:

Քըջըլտաճ շուրիբեմէս
 Ի՛ս ինքըս ամանչում իմ:

ՄԱԼԱԼ, մօտենալով Նաստին:

Մէ ասան, քան, սիւէրես,
 Էսդ'ադա վուր հաշում իմ,
 Ախար, չէ էնգու համա,
 Շուր ունենաս ու թիքայ:

ՆԱՏՕ:

Քու օֆթեմէն օվ գու՛քայ:

ՄԱԼԱԼ:

Խիլքի արի մէ թիքայ,
 Անգաճ գի, չիս փոշիմնի...
 Օչով չըկայ անլուքա,
 Բըրձէնի Ալօմանի
 Խելօք խօսիլըքն է ատաճ:
 Օվ գիդէ, մէ օր Ասուաճ
 Քու մուրազն էլ կատարէ...
 Ախար ումմէն իս պակաս: (Հէֆշօրէն:)
 ձակափ աղլըինիր կարէ,
 Էտով չուստ կու կըշտանաս:
 Քուս իս, չօլախ, թէ քաչալ,
 Բօյտ ու բուսաթտ է պակաս,
 Աճիկրըս կ'օսիս մալ'վալ,
 Սիրուն ծիծաղըս կասկաս
 Մարթուն խիլքեմէն հանում:

ՆԱՏՕ:

Մալալ, էլ չիմ մունջ կենում...

ՄԱԼԱԼ, շանչ անելով:

Քո՛ւ աճկն էլ... հէնց գիդենաս

Բանկումը շահով տրւած
 Հազար թումնիր ունենաս:
 Հէնց քի համա է ասած,
 Աւրթ վուր՝ ակտառ ու հրմայարտ:
 Ինչ մէ խիստ իս ճոթըւտով՝
 Գիգինք՝ շահով իս ապրում,
 Գլուխը իր տիղն է տընքում:
 Ախավագլախ քու գըլխին,
 Քախցած գիմցի էս ցըրտին:

ՆԱՏՕ.

Ումիկն է պահում խախին,
 Ուփրո ինձպէս ակտրտին.
 Կըշտացնում, հաքցնում, տաքցնում,
 Իրի խաղիր է ասեցնում:

ՄԱԼԱԼ, հեգնօրէն:

Մըխկըտալի լացըցնում,
 Քի գիժ-գիժ ծիծաղեցնում,
 Դառը լիզի խըմեցնում,
 Դիւի ջանըտ տաքցնում, դոխցնում,
 Աճկի լուսըտ քօռացնում,
 Խիւքըտ գըլխեմէն կորցնում,
 Հալում, մաշում գողընքում,
 Խուղին չ'է արժանացնում,
 Կենթան — մեռիլ ապրեցնում: (Հեգնօրէն):
 Վարթկերանց համա ումիկ,
 Վուր ծըլում ին ու ծախկում,
 Վուռցոր ամբուայ ծաղիկ: (Դառնա-լեւաթ):
 Սիւ օցերու պէս շըմբիտ
 Փաթըթուիլ ին, խիխտում ին...

Էսօր, ան էքուց մինձիտ,
 Գիգենաս, վուր բըռնում ին:

ՆԱՏՕ.

Ի՞նչ բայդուշ իս կըտըրի,
 Չ'էլաւ էլի նրան հասար:

ՄԱԼԱԼ, հեգնօրէն:

Վի կաց, չուտ մէ հադըրի,
 Նտապով նընգի սարէսար,
 Վուր կինծին չը կոտըրի,

Գէլը չ'ուտէ... խի խճ օխար... Նապօն դառն
 է գնում դէ՛ ի դառնի, նախադէս արգահը դէ՛լով պա-
 րտահանի ձեջ:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՄԱԼԱԼ, սաստիկ յուզուած:

Վոյ. վոյ... մաշի քու ջանը
 Հարփան — թաթի, Սօլօման...
 Բէարութին ում տանը...
 Չըլիս դօստ, չըլիս դուշման:
 Մագրամցօփիան շանը
 Պիտիս տայ իր նըշանը.
 Դարիշխանէն է ճարը,
 Շընքին մէ լօնդի քարը:

Տ Ե Ս Ի Լ Գ:

ՄԱԼԱԼ, ԿԱԿՈՒԼ:

ԿԱԿՈՒԼ, երգելով մտնում է գաւը
 մի ձեռքին, իսկ միւսում՝ բանջարեղենով և կերակրեղենով լե
 թաշկինակ:

Գուն կի՛, արխային քընի՛,
Չ'ինք մընա առանց հացի:

ՄԱԼԱԼ.

Բնա... ում լիզուն ճարտար է,
Նրա գուրծկը դիւի արթար է:

ԿԱԿՈՒԼ.

Օհ, նա, շանմէն վաթար է:
Օր ցերեկով ինձ թախից,
Վունցոր մէ թուրքի դ'աչաղ,
Իր պէս մօծամէք ճանգից,
Սըտիր փըչեցին չաղ-չաղ,
Սուղերումը ինձ սըտից:

ՄԱԼԱԼ, դառնութեամբ:

Գուքանըտ կի ջէր խըշտից:

ԿԱԿՈՒԼ, ձեռքը գլխին խփելով:

Ի՛նչ կ'օնիմ էս գլուխը սաղ,
Վուր չը գամ նրա օֆթէմէն:
Գաննա գիժ էի, սարսաղ,
Վուր իս նօտարուսեմէն

Մօծմութինը դուս բերի: (Գրպանից լուսնը հա-
նելով նա ցոյց փայլով):

Օխտն ու իրիք արասի՛:

ՆԱՏՕ.

Փուզըտ գըցեցիր գերի.
Ի՛ս էն գըլխէն քիզ ասի...

ԿԱԿՈՒԼ.

Միզաւուր չ'իմ էտումը: (Պայմանաւր-
նալից ցոյց փայլով):

Գըրած է էս թըխտումը՝

Նակօի տղայ Ծըտղուզը
Պիտի վէր գայ նազդ փուզը,
Ու Գորըցի Վասիլը
Թանխումը իր վէքսիլը:
Մէտի նընգիր ինք դառնում...
Ի՛ս խրիդի էդնէն գընում,
Գախումը նա է կանգնում:

ՄԱԼԱԼ.

Օվ ունէ միզըր ձեռին,
Կու լըպըստէ արխային:

ԿԱԿՈՒԼ.

Վուր կըծէ մատի ծէրին...

Անց է կենում մէ տարին,
Նրամէն հէսար իմ ուզում:

Էսօր-էքուց է գըցում,
Ամնիլըր անց է կացնում...

Փուզն ու վէքսիլը թաքցնում,

Ու իր ասի ու անումով

Գուքնին վիվէսկա կըպցնում՝

Լաֆկա Բարսիլ Իրզումով: (Ի՛կտի հանդիսա-
լանելով):

Խալին տակեմէս քաշում,

Գուքնեմէն դուս է քըշում: (Ի՛ր վրայ ցոյց
փայլով):

Նակօի տղայ Ծըտղուզին:

Նընգաւ գլուխս արնէ բուզին,

Գախեմէն դուս քաշեցի

Էս քու ռազըծնիկ գուզին,

Ձուրըս դուն պատուիրեցիր,

Ուտեցրի ու ուտեցրի...

Սիրտս ու արունս հովցրի:

Իժում ժէշտի կրտուրը

Գիլի թիքամ-թիքամ արի,

Կոխպեցի գուքնիս գուռը: (Դէպէ Մալալը Է Նապօն):

Միր բանը սուգն է նրնգնում...

Կըտրեցին ու գալօլնում

Զա սամօպրալիստ վը տուրմու: (*) (Դէպէ հան- րեաականները):

Բնս, իմ թանխա, գնդումը:

Սխալէ՛ր, զուրթեցին գուղին,

Բիրթն ին զըրգում Ծըտղուղին:

ՆԱՏՕ.

Քնէտ հաստատած թոխտը: (Գլուխը շարժե- ւով):

Օխտն ու իրիք արատի՛:

ԿԱԿՈՒԼ.

Չիմ գանգալուրի իր վուխտը...

Շանց տըրի, էն էլ ասի,

Թէ՛ իս դակօն չիմ գիղի:

Ասաւ. «գիղեհաս պիտի,

Զակօնումը գըրած է»:

ՄԵԼԵԼ.

Էտ խօսիլը գրուտ մըհրած է:

(*) За самоуправство въ тюрьму.
Կամայականութեան համար բերդը:

ԿԱԿՈՒԼ.

Վճենց չէ: Ծըտղուղինց Նակօն

Խօմ զօքա գիղէր զակօն,

Մընացիլ է իր տղէն...

Տօ՛, վուր ունիվէրսեմէն: (Դէպէ հան- րեաական- ները):

Ի՛ս տարէս-տարի

Իմ խրիգն իմ արի...

Ամառը՛ շուքը,

Զմիռը՛ խիստ բուքը,

Իմ էրեսարքը,

Զեռնիրը, շլինքը

Նինիլ է ապուխտ.

Ինչ է, վուր մէ վուխտ

Թիքայ ունենամ...

Ասէք, իս դակօն

Վճուղ՛անց գիղեհամ:

Ինքը վուր ուտում առած,

Էրկու խօսկ չէ խօսեցնում,

Կ'օսիս խիքեմէն էլած

Աճկիրը վրէս չըտեցնում,

Մէ գլուխ կանչում է. «տուրմա»...

Նուգբար միրք է ուտեցնում,

Ալիբուխարա, խուրմա:

Գուքնի գուռը կոխպեցի՛.

Ապրանքն իմն է, չիմ ծախում:

Իմ նընգրուչը ծեծեցի՛.

Գուն խունգ ու մում իս ծըխում,

Օի քու օջախն է քանդում: (Խղճալի յայնով):

Ախպէր, քսան գամ ինձ դընքսէ,
 Երեսիս էլ մուր քրսէ,
 Ձեռս ու վուտըս բուխաւէ,
 Ասա՛, թէ՛ միտկըտ քաւէ:
 Աճկի պիպիկըս հանէ,
 Թէ արածըս վազ բան է: (Թո՛ւ-դար ցոյց Կապուէ):
 Էս էլ հաստատած թուխոր: (Արիաբար):
 Կորցրի՛լ իմ վազի վուխորը,
 Մօծամէքը խօմ սաղ ին՛
 Ալաի Հառչտորինց Սօղին,
 Շիրաջ Մօզվէրինց Նակին,—
 Տօ՛, հարցրու մէկն ու մէկին...
 Վըրայ իրիքն է Կօնին, (ՍԿԻՄԻՆԻՆԵՐԸ
 ԲՆԻՆ ԻՐԱՅ ԳՈՅ ԿԱՍԷԼ):

Էստի ձեռք քաշած ունին:

ՆԱՏՕ.

Իժում նրանցը վուր հարցրին,
 Նրանք, գանա՛, հաշա կերան:
 ԿԱԿՈՒԼ.

Ինձ էլ դրուտ չը խօսեցրին...
 Քիզ ասում իմ՝ մէ բերան
 Կանչեցին ու գալովնի:
 Ի՛նչ խաջ ու ի՛նչ աւետրան: (Ի՛նչ Կապուէ-
 ուսկանները):

Խալին էլ կ'օսիս մօլեմնի
 Թամաշէն միտը բերի,
 Սուգն էկան, լըքը բեցան:
 Հարցնիս նրանցն ի՛նչն իմ կերի,
 Վուր գըլխիս փաթըթեցան:

Արունըս ի՛նչ է գալի,
 Նահախ տիզը սըտում ին.
 Իմն էլ ինչ միտս է գալի,
 Հէնց ասի— ծիծաղում ին...
 Մարթու միտկը խառնում ին:
 Մագրամ ճւմն ինչ իս ասում,
 Լըսողը նրանցմէն օ՛լ է...
 Կարթացած ունիվէրում,
 Բանը դիւի զակօնով է:
 Մարթ հարցնէ նրանց՝ առուտուր,
 Ան թանխա-հէսաբ գիղիս,—
 Ան փորցած իս դըռնէդուռ
 Տանջանքս խըրիզ անելիս,
 Վուր դուռն ինչպէս հանած թուր
 Արթար գադաստան կըտրիս:
 Ափսո՛ւս չէր կամէրցկի սուգը...
 Ջոգում էին զուրթն ու սուտը,
 Վաճառական մարթիք նրստած՝
 Միը փէշակումը դուս կանգնած:
 Միզ դիփուկիս կու ճանչնէին՝
 Ասկ ու տակով, հունք ու բունքով,
 Իստակն օ՛լ է, օ՛լ է լաքով:
 Ղուրթ է, զակօն քիչ գիղէին,
 Շատիրն էլ վո՛ւնց կարթալ, գըրիլ,
 Մագրամ փորցած մարթիք էին:
 Մօծամերուն կու հարցնէին,—
 Միը վաղուցայ հին օրէնքով,
 Իրանց խիլքով, խըճպըտանքով

Կրօն-դաւին կու վրճուէին.

Երկու կուռն էլ դաբուլ էին:

ՆԱՏՕ.

Կու բրունէիր ադիօկատ,

Չ'էր գա գըլխիտ էտ բանը:

ՄԱԼԱԼ, դէպի Նասոն:

Լիզուտ շինիլ իս մըլրատ,

Լէն ձեւում իս քաթանը:

ԿԱԿՈՒԼ.

Տեսայ մէկին իր տանը,

Ատաւ. «կու տամ քի խըրատ»,

Մագրամ էն անպիտանը

էս գըլխեմէն մէ քսան հատ

Բաջաղու օսկի ուզից: (Դէպի հանդիսականները):

Վոնցոր խիլքըս չը կըտրից:

Չագրանիցի ապրանք է,

Ան վո՛ւր դամօժնի պարտի է:

Տեհաւ բանը շըլուր է,

Նըստեցաւ ինչոր գըրից,

Կ'օսիս հէքիմ - գօխտուր է:

Մէ բաջաղու էլ գըջից: (Դէպի Նասոն):

էտ էլի վոնչից, դէգի,

Իժում քաղաքավարի

Դուռը վըրէս յիգ էգի,

Ատաւ. «ուրիշ վուխտ արի»,

էսօր չ'ունիմ ժամանակ

Ու քի համա չ'իմ պարապ»: (Դէպի հանդիսականները):

իսանները:

Օսկրին հասիլ է դանակ...

Ախար, տօ, խիլքի զառակ,

Հիգըս խաղում իս հանաք:

Նընգիրս էլ ինձ էտ չ'արաւ:

ՆԱՏՕ.

Մորթից քիզ նա անդանակ,

Կայանքըտ դիփ տակն արաւ:

ՄԱԼԱԼ, հեգնօրէն.

էն էլ ժէշտի կըտուրով,

Դուքնեմէտ մընաս բարով:

ԿԱԿՈՒԼ, դէպի Մալալ:

Մէ գիշիր իս վի կալնիմ,

Թամամշովի քարվասլին

Լօնգի վիլէսկա կըպցնիմ,

Վրէն գըրած զարվարալ ուլ

Կակօ Նակից Ծըտղուզով.

Ի՞մն է էլի օրէնքով: (Դէպի հանդիսականները):

Աբա, մէ ինձ էլ զուրթին:

Կ'օսին. «Ծըտղուզինց վուրթին

Քից զօռ է տըլի խիլքին»:

Կու գըցին ինձ գըժանուց,

Քի՛ քարվասլա Թամամշունց:

Մարտիս է ազ դրանից Աստուր մի լաւատի խնջար գըլ-
խին և չընալ յոյն «ունի պարապ» օջիտով:

Տ Ե Ս Ի Լ Զ .

ՄԱԼԱԼ, ՆԱՏՕ, ԿԱԿՈՒԼ, ԱԻԱՔ,
ԱԻԱՔ.

Դաւի— դառաբա, ուշունց,

Էրէզ, էսօր ու էքուց: (Կըշեւը Լ Բաբախը
անգանի վրայ դնելով):

Բարի ըիգուն, վո՛ւնց իք, վո՛ւնց:

ՆԱՏՕ.

Դիւի վայ, վագլախ ու տընքո՛ւց:

ՄԱԼԱԼ, դէպի Աւագը մատնանիշ
անելով պատառոտած օձիքի վրայ:

Դիւի կըռիւ, տուր-ու-դըմիրուց:

ԱԻԱՔ, դէպի Մալալը:

Էսօր ինձ մէ մինձաւուր,

Ուտեցրուց օրինաւուր: (Պէտք է հանդիսանանքը):

Քիչ չօլախ է կըշիւքըս, (Ձեռքը դնելով պատ-
նանոցի վրայ):

Ջառիմէն քաշում շլինքըս:

Հէնց չուտ ետխիս ին կըսչում..

Տօ՛, ախպէր, ո՛ւր իմ փախչում: (Ձեռքով ցայց
է պատկառ:)

Իժում գընչումն ու գընչում:

Գաննա իս չ'իմ ամանչում,

Մագրամ անդէր փէշակում

Թէ, ախպէր, չ'իս ծըպըպում

Մէ քանի մըսխալ քաշում,

Ապրուտըտ խիստ է պակսում:

Հէսաբով օխտը գրօշում,

Վունցոր ասած է տաքսում—

Խօսկի դէիք իմ ասում—

Ղասպներու ծախած մըսում

Երկու գրօշ է սըլքըվում..

Էտ է մընում ինձ դադում:

Անգած գընիս Ուպրավում՝

Քաղաքը մինք ինք քանդում:

Բահն ու քլունգն իրանց ձեռին,

Կինտօ, դ'ասաբ, փըռնըչին

Քաղաքն ակլէբա արին,

Ձը թողին քարը քարին:

Ա՛յ, ինձ վրայ չ'է էրեւում,

Թէ ինչքան իմ իս խէրվում:

ԿԱԿՈՒԼ.

Իմաց արն միր խալխին

Թէ՛ ինչ բան է առուտուր:

Չալիշ իս գալի թանխին,

Դուքնումը, թէ գըռնէգուս,

Մէ էրկու գրօշ աւելցնիս:

ԱԻԱՔ.

Ասում ին՝ պրաւա չ'ունիս...

Միրք իս առնում մէ քըթուց,

Դապի, խաթա, դ'ըշխըռուց:

Ուպրավն օրէնք է գըրի

Ու մինձ դ'աղաղա գըրի.

Ջէր խալխը իր հաւնածը

Պիտի առնէ ու տանէ,

Իժում էն մընացածը

Կինտօն պիտի ռադ անէ.
Տընքալով գըցէ ուսին,
Ձը հարցնէ լաւին, փըսին:
ԿԱԿՈՒԼ.

Դադումին ու վընասին
Տօ, քուր ու ախպէր կ'օսին:
ԱԻԱՔ.

Խախէ հիմի առածը՝
Մէ կուռը գընէ կինտօն
Ձէր ջարթածն ու փըթածը,
Մընացած խըկուօ-մըկուօն
Պիտի տայ օրւայ հացը:
Վից փըթանուց թաքախը
Գըլխիտ գի ու ման արի,
Չափէ էս միր քաղաքը
Ամառ-ձմիռ, տարէս-տարի:
Իմ փէշակի դադումը
Թո՛ղ ըլի նրանց աճկումը:
ԿԱԿՈՒԼ.

Տօ, տուն տանիս բանկումը.
Թանխա կու տան շահումը:
Դրան Կըրէգէտ Վզախմնի
Կ'օսին էս միր քախկումը.
«Խելօք մարթիք ին հիմնի...»
ԱԻԱՔ.

Ախպէր, բանկի փուղերով
Մակարիա ին գընում,
Ռանգէռանգ ապրընքներով
Դուքան, սարգափը լըքցնում,

Մէ մարթ նրացը չէ հարցնում՝
Ապրանքըտ ինչ է դադում:
Կինտօն քաղաք է քանդում...
ԿԱԿՈՒԼ.

Նրանք ին հարուստ սովդագար,
Ի'ս ու դուն—խիխձ ու նաչար:
Թէ ունիս, իմը դուն իս.
Թէ չունիս, իմ դուն շունն իս:
Կըրծանիսի բազումը
Էրէգ տղէրքը մեձրեցին:
Գիղիք էլի՛, հանգումը
Ի'փ Կախէթուն կոնծեցին,
Մարթ չը թողին Քախկումը,
Վուր մէ-մէկ չը կընքեցին:
Աղալօին կու ճանչնաք.
Նա էր միր տօլուբաշին:
Միթամ անում է հանաք...
Քերթում է մարթու կաշին:
Նըստի, անգամ դի խօսկերուն...

ՆԱՏՕ, յոգուց հանելով.
Էրնէկ նրա դէգի աճկերուն:
ՄԱԼԱԼ.
Բնս, հաքին չ'ունէր լախիք,
Կանտօրումն է պրիկաշիկ:
ԿԱԿՈՒԼ.

Կինացնիրը վուր կըցից,
Մէ-մէկ դիփունանցն իշից:
Էրկու էտաժա էաշիկ...
Աստուձ կ'օսէ քի տայ կինք,

Ունիս չուրս-հինգ պրիկաշչիկ,
 Փառք ու պատիւ, ու մինձ խիւք.
 Բանկումն ունիս բլումս փուղ,
 Անուամ է դամօժնի գուղ:
 Յիգ կ'օսի նրա ասածը...
 Ումնոր ասիս, միսն էբի
 Ու դիվունանց արածը,
 Կ'օսիս դրուստ Մալալ դէդի
 Տէրօղորմի պէս շարից
 Ու էլ ձէնը ջը կըտրից:
 Մընաց, կ'օսէ, մէ կինաց՝
 Փօղրաթչիկնիր, սաղ կենաք,
 Նամուսով ճարիլ իք հաց
 Վիրչի կըուի ժամանակ...
 Մէ քանի հարուր հազար: (Դէպէ Ա.ա.բ.բ.):
 Ա՛յ, տօ՛, սարսաղ, քի բազար:

ԱԻԱՔ.

Միգ ին տեհի ցածրը պատ,
 Հաւորրում ին վուտի տակ...
 Էսօր քէսիք իս, ախիատ,
 Զ'ունիս ծամելու մաստակ,
 Ամէն բանում միղաւուր.
 Էքուց դառար փուղաւուր,
 Մարթ իս խիստ օրինաւուր:

ԿԱԿՈՒԼ:

Ղուրթ իս, ախպէր, փունցոր վուր
 Իս չ'իմ դառնա թարաւուր:

ԱԻԱՔ.

Բէսիբի բանն է ջրուր: (Դէպէ Մալալը, որ Լա-
 Բախի Դիլէ փոյէրը հաւատում է):
 Հ՛ը, Մալալ, կրակի փուղ է,
 Կամաց, ձեռքս կու էրէ... (Մալալին, որ
 ինչորը չ'իմ է):

Իընձուրն է արնաթաթախ,
 Զ'ուտիս, ախէք կու կըտրէ:

ՄԱԼԱԼ.

Խօսում իս սարսաղ, սարսաղ:

ՆԱՏՕ.

Ինչի՛ր իս ասում, Աւաք:

ԱԻԱՔ.

Ասածիս կէսն է հանաք...
 Կերէք, դէդի, ձիգ հալալ,
 Ռ՛ւր իս ջըգըրվում, Մալալ: (Դէպէ հանդիսա-
 կանները):

Մազրամ խրխճի քրտինքը,
 Գիդիք, չ'է մարսում ինքը...

Ջանը տալիս է փուղի,
 Փուղը՝ հէքմի ու դիդի,
 Լէշն էլ վերջը՝ սիւ խուղի:

ԿԱԿՈՒԼ.

Սուգն էի՛ր էսօր, Աւաք,
 Տեհար էլի՛ լաւ հանաք:

ՆԱՏՕ.

Իս փունչիչ չ'իմ իմանում:

ԱԻԱՔ.

Վուր նընգաւ ուգալովնում:

Տիս, կրակ նընգաւ դուքանը,
 Քունը չէ, քու հարեւնի.
 Գրցում ին դադաստանը,
 Դառնում իս ուզարովնի:
 Ինձ ուզում իս վեր սրկի.
 Էտ դառնում է գրաժգանսկի:

ՆԱՏՕ.

Իմացայ, վուրթի, կէնտ-կէնտ:

ՄԱԼԱԼ, դէպի հանդիսականները:

Մէկը՝ գիժ, մէկէլը՝ ցէտ:

ԱԻԱՔ.

Գիդիս ի՛նչ, ախպէր Կակաւ,
 Ղուրթ է, բանտ է ճանտրակուլ,
 Մագրամ գիդիմ ազփօկատ,
 Շատ փուղաուր, շատ ախկատ
 Լըսիլ է նրա գովասանք:
 Արի մէ նրա մօղ գընանք: (Ի՛նչպի հանդիսական-
 ները:)

Մէ ասում է, խօսում է,
 Վունցոր լաւ քամու ջաղաց.
 Աղում է ու կալսում է,
 Խալխը մընում բերան բաց:
 Տեհնում իս բանն է շրուր...
 Շինից Ռուսէթու ալուր:
 Սիւին ցարցի նըմուտում
 Քրտում, շինում սիպտա թան...
 Բուխաւեմէն ազատում
 Գուղ առիս, մարթասըպան:

ԿԱԿՈՒԼ...

Գընանք ու տեհնինք... բըլքամ...

ԱԻԱՔ.

Ախպէր, մըճլամ է, մըճլամ: Գուրն էն գնոմ
 ի մտախն:

ՏԵՍՈՒԼ Է.

ՄԱԼԱԼ, ՆԱՏՕ.

ՄԱԼԱԼ.

Ինչկի ախոււմը ջուր գուքայ,
 Գըրգնի աճկիրը՝ դուս գուքայ:

ՆԱՏՕ.

Աղօսկ է իրիգնապահի:

ՄԱԼԱԼ.

Քօժ, քիզ ի՛նչ է պատահի...
 Կախպէքս իս դառի բերնի:
 Ի՛նչ էրազնիր իս տեհի,
 Ի՛նչ արարմունքս իս բըռնի.
 Էն էլախոււանը չըլի:

ՆԱՏՕ.

Մալալ, խօսեցար էլի:

ՄԱԼԱԼ, յուզուած:

Բան, չիս գիդի, կու խօսիմ.
 Տիզն էկաւ, էս էլ կ'օսիմ.
 Մէ խօսկ՝ ան թըթու, ան խակ...
 Կու շինիմ բերնի մաստակ,
 Կու հաւարրիմ վուտի տակ:

Դառիլ իս գրուստ սուր դանակ,
Սրրտումըս պրտուտ գալի
Ու շունչ քաշիլ չ'իս տալի:

ՆԱՏՕ, գլուխ տալով:

Շնորակալ ինք, Մալալի:

ՄԱԼԱԼ:

Չ'ասիս, թէ քիքս է գալի,
Իր արած լառութիւնը
Գ'ուզէ քընթեմէս հանէ:

ՆԱՏՕ:

Էտ քու խօսած կութիւնը,
Մալալ, աւելնուրթ բան է:

ՄԱԼԱԼ:

Էս քօծը հոքիան է...
Ինչ անինք թէ՛ ծիր մարթ է,
Փուղ ունէ, սրրտի վարթ է:
Բախտը գուռըտ ծեծում է...

ՆԱՏՕ:

Մի աւտա, քի խախցնում է...
Ինձ շատ տարի է խախցրի,
Սառը քարին նրստեցրի: (Հեգնօրէն):
Ղուրթ, Վարթանտ ո՛ր է կորի:
Գընացիլ կու'լի Գօրի...
Էստի ուստա չ'է ճարի,
Թագի տակայ գէրիէս
Էնդի է զակազ արի:
Հօղաբազ ու սիւէրես...
Ինձմէն նա խօսկ է առնում,

Ինքը խէջախալէր դառնում,
Նրստեցնում խալաս օսկում,
Ինձ Գրիգօլի վրայ փսակում:..

Ու գրուստ հէնց էս իրիգուն
Խօջի վանքումը թաքուն —
Չ'իմանայ նրա փեսացուն —
Գըլիսիս օին է գալի:

ՄԱԼԱԼ:

Իս ծիծաղում սրրտալի,
Գուն կի ճիճիւնի գալի...
Էսօր դառայ արժանի
Ասծու օղորմութէնի: Մարնո՛ւ է Բիւրն աջ դառնից
Գլխարկով և յեռնափայտով:

Տ Ե Ս Ի Լ Ը:

ՄԱԼԱԼ, ՆԱՏՕ, ԲԻՔԻ:

ՆԱՏՕ, դէպի Մալալը մտնող
Քիքիւնի վրայ մատնանիշ անելով հեգնօրէն:
Բախտը ծեծում է գուռըս... (Ինչպէ՛ Բիւրն):
Աճկըս քի մընում, արի:
ԲԻՔԻ, գլխարկը վերցնելով և
ձեռնափայտը անկիւնում դնելով նստում է տախտի վրայ:
Բարիգուն հարեւներուս:
ՄԱԼԱԼ:
Գալտ ըլի հազար բարի:
ԲԻՔԻ:
Մէ ափիցար, էրկու ուռս
Էլախտ վարալուրդ արի...

ՆԱՏՕ, ճշարով:

Վճյ, խուզը գըլխիս, վուրթուս (Քլ+էն նոսրած
դեղից վեր է կենսւմ և սպաշած նայում):

Չաթիլ ին, բերթն ին տարի...

Վճւր ջուրը նընգնիմ, Աստուծ:

ՄԱԼԱԼ,

Ի՞նչ իս ծըլծըլում, տուտուց:

ՆԱՏՕ, Մալալի խօսքին ուշք չը

գարձնելով, դէպի Բիքին, որ սպաշած նայում է:

Ո՛ւր էիր թողնում, անաստուծ,

Ձէն կու հանէիր, զըջխրոուց,

Իմաց կու տէիր իր վուխտին...

ՔԻՔԻ,

Լըսած իք, վուր հարցրին ուխտին...

ՆԱՏՕ, մօտենալով Բիքինին, դառ-
նութեամբ:

Տիգն է, քի տանին, խիխտին: (Հեռանալով նրա-
նից և անց ու դարձ անելով Բեռի վրայ):

Կօլօլ թաղը մօզ կու'լէր,

էն զայմաղլումն իմ վուրթին

Ձեռաց նրանցմէն գում կու'լէր:

ՄԱԼԱԼ, Նատօի վրայ մատնա-

նիշ անելով, դէպի Բիքին, որ նշանացի հարցնում է:

Գառիլ է բերնի բուրթի:

ՆԱՏՕ, ուշք չը գարձնելով Մա-
լալի վրայ:

Մէճկըս չորցիլ էր, վուրթի,

Ու իս քիզ չ'էր բերի...

ՔԻՔԻ, դէպի Մալալը:

Մէ ումն ին տարի գերի:

ՄԱԼԱԼ, դէպի Նատօ:

Քն, մէ միզ էլ խօսեցրու:

ՔԻՔԻ, դէպի Մալալը:

Աստուծ սիրիս, հասկացրու

Ի՞նչ է ետրաբ իմ միզը:

ՄԱԼԱԼ, Նատօի վրայ մատնա-
նիշ անելով:

Վուցոր խիւքը չ'է սիղը:

ՔԻՔԻ,

Մէ ձիզ ի՞նչ է պատահի:

ՆԱՏՕ,

Սիւ օրը չ'էր տեհի:

ՄԱԼԱԼ, դէպի Բիքին:

Կակուլին ունէր դավի,

Երէզ տանուլ է սըլի:

Պիտին գըցի Մէտէխը:

ՔԻՔԻ, ձեռքը տալով գլխին:

Ի՞նչ միխկ ունէ էս գլուխը,

Վուր Կակին ունենայ դավի:

ՄԱԼԱԼ,

Գէգի ծըծիրը կու էրլի:

ՔԻՔԻ, ձեռքը ճակատին տալով:

Քիքի, ուղուփրտ կորցրիլ իս...

Ելախտ, փողոցեմէն գալիս,

Ռատտ էկան՝ Աւաքն ու Կակին.

Մօզ իմ գընում, սալամ տալիս,

Մըտիկ տամ նրանց՝ քիչ կօնծած ին...

Ասին թէ՛ գընում ինք բաղնիս:

Գամ՝ ափիցար անիծածին

Տեհնիմ՝ բագում պըտուտ գալի...

Գըլխիս էս օինն է գալի:

ՆԱՏՕ, այս լուրից հանգստացած:

Հիմի մէ խօսկ էր, ասին,

Մարթ խօմ չը սըպանեցին:

ՔԻՔԻ,

Ասծու ստիլածած աթմորթին,

Ի՛փ չ՛ունէ համիլիբուլթին,

Սուրփ գըրումը գըրած է՝

Վուտով, գըլխով կորած է:

ՄԱԼԱԼ,

Քու անդէր ափիցարը

Գըցից սրան տաքն ու սառը:

ՔԻՔԻ:

Մինք ինք միր գըլխի դուշմանը...

Օր-ցերեկով, թէ մըթանը,

Ինչկլի վուտն ի գերեզմանը: (Իէպէ երկն + յե-
+երը Բաւճրայնեւէ:)

Նա գիգէ դիվունի բանը...

Ի՞նչ է գալացու ում գըլխին,

Թէ բախտ ու թէ քամըրխտուլթին:

Փըշիր է տըրի նա վարթին,

Ինչ է, չ՛անէ հըմպարտուլթին:

ՄԱԼԱԼ,

Թէ Աստուծ կու սիրիս, Քիքի,

Յաւիր իս քաշի աշխըրքի:

Մարթ իս, ինչոր մարթուն պիտի:

Մինք մէ չալիշ գանք էգէրի,

Առանց զալօգ ու թալղէբի

էս խիփաթեմէն ազատինք:

ՔԻՔԻ,

Ի՛ս կու թալիմ արուն քըրտինք,

Խաչ, Աւետրան, Աստուծ, իրգինք:

ՆԱՏՕ, դէպի Քիքին, կակուլէ
մասին:

Գիղիս, ունէ խիլք, չ՛ունէ փուղ...

Անմիղ ուտեցնում ահ ու դուղ:

Տաւըս դըրուտ Գըխտուսի սուք է:

ՔԻՔԻ,

Չարն ու բարին գալացուք է:

էտէնց իմաց կ'օնէիր,

Ա՛յ, մարթ Ասծու, քու բանը.

Լամիս ինձ խիխտիլ էիր,

Կրակ գըցեցիր իմ ջանը:

ՄԱԼԱԼ,

Քիքի, քիզ արքաուլթին,

Կանգնած իս Ասծու ճամլիին:

ՔԻՔԻ, երեսը խաչակնքելով է

ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով:

Արժանանաք Նրա փառքին...

Մալալ, խօսին էկաւ խօսկին,

Ասած է՝ դիղին օսկին

Միշտ սիւ օրին պէտկ կ'օծին:

Մէ օր պիտի հոքի տանք...

էս էլ իմ խոստովանանք՝

Մէ կապուծկում յիգ գըցած

Ունիմ թաղմելա գըօշնիր,

Անց իմ կացրի իս քախցած
Շատ օրիւր, շատ գիշերնիր: (Դէպէ երբեք + յե-
+երբ Բարձրացնելով և երեւոյ խալալն+ելով):

Փանօք իմ ստիղծողին, Աստուծ
Ինձ էս օրին էլ հասցուց,
Վուր իմ դառը քրքրտընքի
Դադուամով էսօր պիտի
Իս մէ հոքի ազատի:

ՄԱԼԱԼ:

Քու հոքուն դէմ գայ, Քիքի,
Քու արած լաւութիւնը:

ՔԻՔԻ:

Թողնինք խօշտաբութիւնը.

Ունեւուրը չ'ունեւուրին

Համաշայ պարտական է,

Հարեւանն էլ հարեւնին

Միշտ պիտի քօմագ անէ:

Աշխատիլ ին շատ տարի.

Օչով հիզը չ'է տարի...

Դառիլ ին խուղի գերի,

Դադածն ուրիշն է կերի,

Տարածն անումն է էլի: (Երեւոյ խալալն+ելով

և յե-+երբ դէպէ երբեք + Բարձրացնելով):

Փանօք, հազար փանօք իմ ստիղծողին...

Կու տանիք, կու պահ տայ խուղին.

Չ'իք թողնի գեղնի էրեսին:

Գերեզման-օխնէք իրիցին

Չ'իք խնահի մէ-մէ աբատին:

Կու իշիք խարազ Քիքինին

Ամէն-մէ օղորմաթասին:

Քար կու գրցիք նրա գերեզմնին,

Կու թափիք մէ պուտ արտըսունք:

Լէշըս կ'ուտէ ճիճուն, օրթունք...

Մարթըս է մահկանացու.

Պիտի բռնէ փիշն Ասծու:

ՄԱԼԱԼ:

Մարթ իս նամուտով, հալալ,

էրեսիտ միռոն ունիս:

ՔԻՔԻ:

Քի արքաութին, Մալալ,

Դուն ինձմէն էլ լաւ գիգիս.

Իմ տարսը մարթու համա՝

Խունգ ու մում, աղօտի, ժամուց,

Խաչ, աւետրան, գահանայ

Դրուտտ գաւազան է ծիրուց: (Զե-+երբ դէպէ

երբեք + Բարձրացնելով և երեւոյ խալալն+ելով):

Փանօք իմ ստիղծողին, ճիզ ումբըր...

Ի'փ կու արժանացնէ մահի.

Միղայ ու մէ քանի ծունդըր,

Հոքիս կու տամ առանց ահի:

Պարզէրես օր դադասունին

Մօգ կ'էհամ նրա աթուռին, (Զե-+երբ Բար-

ձրացնելով և ալ+երբ դէպէ երբեք + յգելով):

Կ'օսիմ՝ Հայր միր, վուր իրգինըս,

Պիտիս բախշի ինձ միխկիրըս...

Կու բախշէ նա իր ստիխածածին:

ՄԱԼԱԼ:

Բարիխօսն է Աստուծածին:

ՔԻՔԻ, տախտից վեր է կենում:
 Գլխարկը և ձեռնափայտը առնելով:
 Ձիգ վրայ ըլի իմ օխնանքը...
 Խոխուրթըս, խոստովանանքը
 Կո՛լի ձիր հոքու մինձ պարտիր: (Գլխարկը թափ-
 ւած է և լեպի աջ դուռը անցնում, կանգ առնելով):
 Կակին թող գայ, փուղը տանէ,
 Իր գըլխին տիրութիւն անէ:
 Գալացուքը Ասծու բան է...
 Թող ինձ (հ)ամա փիքըր չանէ:
 Ի՞նչ օր կու գաղիմ, օր կ'ուտիմ՝
 Նուր թըխած հաց, լաւ լօբու սպաս,
 Վրէն կըտըրտած սուխ ու կոտիմ,
 Կախէթու գինով լիքը թաս...

ՄԱԼԱԼ.

Ձիբիտ փուղն ըլի անպակաս,
 Գաղումըտ դիւի օսկի խալաս,
 Ամէն բարութէնի ռաստ գաս
 Բարի մարթ ու բարի հոքի:

ՆԱՏՕ.

Միր թանգագին, խարազ Բիբի:

ՔԻՔԻ, դէպի Նատօն:

Վաղուց իս իմ հոքիան,

Ո՞չ գու մարալ ու ջէյրան... Դուրս է գնում
 աջ դուռէն, իսկ Նատօն կըբար և ինչորով լեւեալը սեղանից
 առնելով լեպի դուռէն: Մտնում է Մարգարը մի կայաց յետին:

Տ Ե Ս Ի Լ Ք:

ՄԱԼԱԼ, ՄԱՐԲԱՐ.

ՄԱՐԲԱՐ, կայոցը Մալալին տա-
 րով:

Էստունք զրգից Վարթանը,
 Ինքն էլ գու՛քայ մըթանը: Մարգարը դուրս է
 գնում: Մտնում է Նատօն:

Տ Ե Ս Ի Լ Ք:

ՄԱԼԱԼ, ՆԱՏՕ.

ՄԱԼԱԼ, դէպի Նատօն, սեղանի
 վրայ դրած թաշկինակը և գաւը ցոյց տալով:
 Էստունք վի կալ, տար թոնդրատուն,
 Ղ'օնաղ ունինք էս իրիգուն:

ՆԱՏՕ, սեղանից թաշկինակը և
 գաւը առնելով՝ հեգնօրէն:

Ղ'օնաղտ է թաին Վարթանը,
 Քութահ արած կու՛լի բանը: Դուրս է գնում
 լեպի դուռէն և նորից արուն մտնում:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա :

Մ Ա Լ Ա Լ , Ն Ա Տ Օ :

Ն Ա Տ Օ , Մ ա լ ա լ ի առաջ բաց կա-
պոցը տեսնելով :

Մ ա լ ա լ , է տ ի ն չ է բ օ խ չ ո Վ :

Բ եր ող չ ր տ ե չ ա յ օ չ ո Վ :

Մ Ա Լ Ա Լ :

Ա ս տ ու ձ գ ր ր ս տ ու ձ է ք ու բ ան ր ,

Շ ու ր ի ր ա է ղ ր ր գ ի Վ ա ր թ ա ն ր :

Ն Ա Տ Օ , Մ ա լ ա լ ի չ ա ղ ո ր դ ա ծ ի ն

չ ա լ ա ա չ ջ ը ն ծ ա յ ե լ ո Վ չ ե գ ն օ ր է ն :

է տ ի ն չ մ ու ք թ ա պ ա տ ան ր է :

Մ Ա Լ Ա Լ :

Դ ու ն է լ յ ու տ ն ի ր ր ա ձ ր ք է :

Ն Ա Տ Օ :

Ա ս տ ու ձ կ ու ս ի ր ի ս , հ լ մ ն է :

Մ Ա Լ Ա Լ , կ ա պ ոց ի մ ի ջ ի բ ո Վ ա ն -

դ ա կ ա ծ ր ղ ն ն ե լ ո Վ առ ան ձ ի ն :

Ա մ է ն բ ան ր չ ան գ ու մ ն է :

Ն Ա Տ Օ , չ խ տ ի ն բ ո լ ր պ ա ր ա գ ա ն ե -

ր թ Վ իւր ձ ե ու ք ր առ ն ն ե լ ո Վ չ ր ձ ու ա ն ք ո Վ :

Մ է մ ի տ ի կ ս ր ա ծ ա խ լ ն եր ու ն :

Մ Ա Լ Ա Լ , չ խ տ ի ն ձ ե ու ք ի գ առ ն ն -
լ ո Վ :

Ս ա ղ գ ու ՝ ք ա յ ս իւ ա ձ կ եր ու ն : Դ ն ս ու ձ է պ ա խ ա ղ ի
ճ ր ա յ :

Ն Ա Տ Օ , գ լ խ ի թ ա շ կ ի ն ա կ ր իւր
ձ ե ու ք ր առ ն ն ե լ ո Վ :

Մ ը տ ի կ ա ղ լ լ խ ի պ է ծ ի ն :

Մ Ա Լ Ա Լ , ձ ե ու ք ի գ առ ն ն ե լ ո Վ :

Ս ա ղ գ ու ՝ ք ա յ ս ի ր ու ն ք թ ծ ի ն : Դ ն ս ու ձ է պ ա խ ա ղ ի
ճ ր ա յ :

Ն Ա Տ Օ , իւր ձ ե ու ք ր առ ն ն ե լ ո Վ :

Մ ը տ ի կ է ս դ ո շ ու գ օ ս լ կ ի ն :

Մ Ա Լ Ա Լ , ձ ե ու ք ի գ առ ն ն ե լ ո Վ :

Ս ա ղ գ ու ՝ ք ա յ թ ա գ ի տ ա կ ի ն : Դ ն ս ու ձ է պ ա խ ա ղ ի
ճ ր ա յ :

Ն Ա Տ Օ , գ է ր ի ա ն իւր ձ ե ու ք ր առ -
ն ն ե լ ո Վ :

Մ է ս ր ա ու ա ն գ ի ն , ղ ՝ օ շ եր ու ն :

Մ Ա Լ Ա Լ , ձ ե ու ք ի գ առ ն ն ե լ ո Վ :

Ս ա ղ գ ու ՝ ք ա յ ա լ թ ր շ եր ու ն : Դ ն ս ու ձ է պ ա խ ա ղ ի
ճ ր ա յ :

Ն Ա Տ Օ , իւր ձ ե ու ք ր առ ն ն ե լ ո Վ :

է ս է լ չ ա ս տ գ ր ա պ ի տ ա լ մ է ն :

Մ Ա Լ Ա Լ , ն ր ա ձ ե ու ք ի գ առ ն ն ե լ ո Վ
դ ն ու մ է տ ա խ տ ի վ ր ա յ :

Շ ը ն աւ ու ր ը լ ի , ա մ է ն . . . (Մ ի փ ո + ր կ ա պ ոց յ ե ու
փ ն առ ն ն ե լ ո Վ) :

է ս բ օ խ չ է ն ջ ի բ ա գ ը լ ի :

Ս ր ա մ է չ ն է ս ի պ ա ր լ կ ե ղ է ն : (Տ է ա ն ն ե լ ո Վ ս ր Ն ս ա ր թ ու
պ ի ր լ է յ ա ու) :

Ք ա ն ի գ ՝ ու ղ ի ս լ ա գ ը լ ի ,

Ք ու ն ա ս ի ր ն է Ա ղ ի ն գ տ ղ է ն : (Ն ս ա ր թ ու խ ու ր ա -
առ պ ա ա թ պ ի ու ս ճ ա ս թ մ ու ն փ ն եր ի մ է ջ կ ա ն ֆ ն ա թ է , ու ղ +
ը ք ա ր յ ն ե լ ո Վ ն ր ա խ ու ս ե լ լ ի ն :)

Կօխտա գուքի ու զըլպըլտի,

Գուշմնի լիզուն քար կըտըրուի:

Կալքնիրըտ խուճուճացրո՞ւ... (Տէտէլով որ
Նարոն ուշ չէ Գարշնո՞ւ, Մալալը Գրմո՞ւ է հեպեալ խո-
րանանկո՞ւնէան՝ հաւատելով Բուր զարդարանքը կապոցո՞ւ՝
պալիս է Նարոն յետքը և հրելով նրան Գէպի Գէճի Գո՞ւրը):

Գուշն ին ծեծում, տնր, թաքցրո՞ւ...

Մէ չուստ գընն... շտապեցրո՞ւ...

Տ Ե Ս Ի Լ ԺԲ:

ՄԱԼԱԼ.

Էրկաթը քանի տաք է,

Մալալ, չաքչէ ու չաքչէ...

Մէ քիչ դուն խիլք բանեցրո՞ւ...

Մէ քիչ էլ բանը խախցրո՞ւ...

Իժում նըստի արխային... (Դո՞ւր Բաղխո՞ւ էն:

Մալալը ունին Գրմելով):

Զէն է, Վարթանն է թախն,

Կոճիս ալջու է գալի: (Դո՞ւր նարից Բաղխո՞ւ էն):

Օ՞վ է, բաց է, տուն արի: Ինքը նարո՞ւ է յա-

խուհոյճան պախարի վրայ: Մարնո՞ւ է Վարդանը ալ Գրմելից:

Տ Ե Ս Ի Լ ԺԳ:

ՄԱԼԱԼ, ՎԱՐԹԱՆ.

ՎԱՐԹԱՆ.

Բարի՛րիգուն քի, Մալալ:

ՄԱԼԱԼ, տախտից իջնում է և

Վարդանին դիմաւորուելով:

Գէգի կաթը քի հալալ:

Ա՛յ, Աստուճ քի տայ բարի,

Մէ մինձ ջըվալ էլ գարի:

Ասում իս ու չ'իս գալի...

Գալըտ ըլի համաշայ,

Միր կըռնէն է թամաշա.

Հարսնիք ունինք, համեցէք,

Գողաուրը քամեցէք: Առաջաբնելով ախար Վար-

դանին՝ ինքը նարո՞ւ է նրա Գէճը պախարի վրայ:

ՎԱՐԹԱՆ, աթուռի վրայ նստելով:

Նատօխտ փախկեցրիլ իս,

Էրեւում է ճակտեմէտ,

Անգճում հալիլ, ածիլ իս,

Գուս չ'իս թողի ձեռնեմէտ:

ՄԱԼԱԼ.

Խիլքի գուքայ գաղանը,

Ի՞փ կու նընգնի զընդանը:

Ի՞ս ինքըս վուրփեւէրի,

Զ'ունէի մէ իշատակ,—

Դրան վուրփերով տուն բերի:

Պահեցի ծընդանըս տակ

Թամամ քանն ու հինգ տարի,

Կ'օսիս վունցոր հալալ մէր...

Խալիը իմ ախիկ գիդէր:

Զեռս ու վուտըս բուխաւած,

Դառայ մէ խօսկով գերի...

Գիդէ իրգնաին Աստուճ

Թէ ինչ ամազ իմ դըրի
 Դրա վրայ, թէ՛ դրա վուրթկերանց:
 Հարուստ օջախըս հօրանց
 Ուտեցրի մատո՛ղ ընկերուն,
 Շինեցի տըղամարթ նրանց:
 Զը տուր տըւի դուշմաներուն,
 Վուր հաւսըրին վուտի տակ:
 ՎԱՐԹԱՆ.

Դառիլ իս բարի հրիշտակ...
 Ո՞ւր է, վուր չ'է էրեւում:

ՄԱԼԱԼ, մատնանիչ անելով դէմի
 դռան վրայ:

Հաքնըվում է, հաղորվում
 էնդի միր թոնդրատանը: (Մօպէնալով դէմի
 դռանը:)
 Նատ'օ, էկաւ Վարթանը: Վերադարձան՝ է է-ը
 արեւը:

ՎԱՐԹԱՆ.

Իէրիէն խօմ հանեցաւ:
 Արունըս խանըրեցաւ...

ՄԱԼԱԼ.

Գիդիմ, մարթ իս օլորքով...
 Կարած է իր օրէնքով,
 Վրէն էլ նըստած է շնուքով:
 ՎԱՐԹԱՆ.

Գողցան օսկէ դ'այթանը,
 Վունչիչ չ'ունէ բոլորքը: Նապօն էրեւո՛ւմ է դէ-
 մի դռանն ահաթին: Վարդանը անց ու գարջ է անո՛ւմ էէմի
 անասը:

ՄԱԼԱԼ, դէպի Նատօն:

Քիզ է մընում Վարթանը,
 էս տունը ու օճորքը...
 Մէ ջալդ հաքնըւի, պըրծի:
 ՆԱՏՕ.

Ջէր կոճկնիրըս չ'իմ գըցի,
 Ինձ ու ինձ չը կանացի.
 Ուժըս չ'է ախտում, չ'է գալի,

Արի, մէ օտկէ, Մալալի: Մալալը անցնո՛ւմ է
 Նապօնի կողմը և է Ֆասին դռնու գնո՛ւմ:

Տ Ե Ս Ի Լ ԺԳ:

ՎԱՐԹԱՆ, բեմի առաջ, դէպի
 հանդիսականները:

Գիդին, մարթ իմ օլորքով.
 Բան կու բըռնիմ օրէնքով:
 Հը, Վարթան, օյեաղ կացի,
 Դամբըս հիռու մի գըցի:
 Հարկաւուր չ'է ճանառը.
 Զ'ունիս գուն նրա հունարը:
 Մուրծա ձրգան բըռնիլը,
 Ու նրա զըղի ծըծիլը,
 Խիստ իմ սիրի ջէհէլուց.
 Սովորուտկըս է ծիրուց:
 Թող, գամբումըս չը նընգնին,
 Նընգան՝ մինձ քընով քընին: Մալալը և Նապօն
 դռնու են գալիս դէմի դռանից:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ե:

ՎԱՐԹԱՆ, ՄԱԼԱԼ, ՆԱՏՕ.

ՄԱԼԱԼ, դէպի Վարդանը:

Խէչախալէր, շտապի չաւարար... (Մարտնանիշ
անէլով Նարոսի վրայ):

Ղ'անդ ու շաքար, հիլ ու բահար, (1)

Էս էլ քի զուբաժ նորահարս:

ՎԱՐԹԱՆ.

Նէշ ու բէշ է, թէ գորթ չահար: (Աւանդին):

Սա հնձ ուզում է բերի մարս:

ՄԱԼԱԼ.

Վունցոր գ'ուզիս հէսաբ արան:

ՎԱՐԹԱՆ.

Սմագրտ մէ հալալ արան...

Ի'ս դրան իւր վուխտին կու հասցնիմ:

ՄԱԼԱԼ.

Քօժ, բարի սահաթի ըլի.

Քու կանանչ կարմիրը (2) տեհնիմ.

Ու առջնիկըտ տըզայ ըլի:

ՎԱՐԹԱՆ.

Աստուձ անէ անիոշմնելի:

ՆԱՏՕ, յուզուած:

Չ'էլան... հերիք է, Մալալի:

ՎԱՐԹԱՆ, զննելով ոտից ցգլուկ

Նատօին, որ պատրաստ է գնալու:

Դուն վունցոր խիստ իս շտապում...

(1) Այսինքն թէ՛ ամէն բան կարգին է, Բառացի նշանա-
կութիւնը տե՛ս վերջը:

(2) Նարօտ:

Կայ, պիրօբէն հաստատինը: (Իէպէ հանդիսա-
հանները):

Դիփուներն իր դազով չափում

Ու թափում արնէ քրրտինը

Խելօք ասիս, թէ՛ անխիւք...

Միշտ հունրաւուրն է դադում:

Տեհնինը օլ ումն է ախտում: (Իէպէ Նարօն):

Մընամ ասած ունէինը՝

Մինք էրկուսըս միր մէջը

Փայ ինք անում նրա վէջը...

Մէ խօսկով թէ՛ լաւ, թէ՛ վաղ,

Ինչ ունէ հոքէիզագ,

Ի'փ նրա վրայ քի կու փսակինը: (Իէպէ Մալալը):

Գիդիս, վուր մահ կայ ու կինը...

Խօմ միտտ է միր խօսուածիկը,

Մէ դրուստն ասան, Մալալ ջան:

ՄԱԼԱԼ.

Ձիր շընքին միխին ու վարցիկը,

Գիդիս. մալ—հալալ ու ջան (1)

Աղատ ըլիմ իս ձիզմէն:

ՎԱՐԹԱՆ.

Յիդ կանգնում պիրօբեմէն:

ՄԱԼԱԼ.

Մատս էտումը խառը չ'է...

Ի'ս հոքի ունիմ տալու:

ՎԱՐԹԱՆ, իւր կուրծքին ձեռքը

խփելով:

Գիդիս, էս էն սարը չ'է,

(1) Արդար ապրանք և հոգի.

Վուր տիղ ճարիս նազմ տարու: (Դէպի Նասրէն):
Դուն ինչ իս ասում՝ հա՛, չէ՛:

ՆԱՏՕ.

Ի՛ս զաբուլ, դա թող հաչէ: Զեւոյ յեւոյ
ասում զուրս էն գնում աջ դռնից:

Տ Ե Ս Ի Լ ԺՁ:

ՄԱԼԱԼ, փոքր ժամանակ նրանց

էտեից նայելով՝ դէպի հանգիստականները:


Գիղն աղէսեմէն քանդած՝

Գիլի անումն է կոտորած:

Գիսի գընացին շան հարսնիք,

Ի՛ս մընացի տան բալնիք:

Վարագոյրը իջնում է:



ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ:

Բեմը ներկայացնում է միեւնոյն սենեակը առաջին գործու-
ղուքեան մէջ Գրիգօյի տանը: Գրիգօյը հագած ունի Բիրմանի
շալից մագոյ խալար եւ մի երկայն ջիբուխ մետքին ծխելով՝
ղուրս է գալիս աջ դռնից եւ անց ու դարձ անում բեմի վրայ:

Տ Ե Ս Ի Լ Ա:

ԳՐԻԳՕԼ:

Վաղուցայ մարթ, սովորագար,

Դուս կանգնած չախմըխի քար,

Ի՛րիք քրսան տարեկան,

Անումըս վաճառական,

Խրիգ անելիս եանդիլ զամ...:

Նրա մօղ խիլքըս տանուլ տամ:

Աստուճ գանա խիլք էրիս

էնդուր, վուր նա ախտիլ էր...:

Լաւ ազատեցիր գերիտ, (ձախարհն յեւոյ յասումէ):

Մաշալայ, Գրիգօյ ախպէր:

Երկու օրայ ծիծիլէն,

Վուր չը հասկանայ միտիլս,

Զեռք քաշէ պարտիլիս սիէն,

Նօտարի մօղ խընդիլքըս,

Թէ՛ իմ ախպրկայ համա

Հաստատում իմ մուլքս անդին,

Տանէ իրիք մօծամա
 Ձեռք քաշիլ տայ արխային
 Հաստատած թրխտիս տակը,
 Էն կըռօ լածիրակը...
 Ի՛նչ արմընալու բան է:
 Մագրամ ինձ պէս Գախկըցին
 Վո՛ւնց դէս, վո՛ւնց դէն կու տանէ,
 Վուճցոր ջուրը քար գըցին
 Ու մէքաշ «բըլթ» ձէն հանէ,
 Կ'օռէ խումբօբանա է:
 Ի՛նչ զակօն, ի՛նչ աղւօկատ.
 Ախար, տօ, խիւքի ախկատ,
 Անուժիտ համա արի,
 Վուր դուն նընգնիս մարաքայ,
 Ժած գաս քազաքաւարի.
 (Աստուձ տըւիլ է թիքայ...)
 Ախչրկաս ձեռը բըռնիս,
 Վի կալնիս ու դուս տանիս:
 Ղուրթ է. ութ հազար թուման
 Պարտկըս պիտի տըւիլ էր՝
 Խալխի, թաքաւորական,
 Ի՛՛փ թուխտը հաստատուիլ էր:
 Տուն ու տիղ սարքած-կարքած,
 Տաս թուման էլ ամսական,
 Վուր չը մընամ՝ իս քախցած:
 Մագրամ ի՛փ հէսաբ արի,
 Ղուզումըս չը նքստեցաւ...
 Մէ բան էր, բէսաբ արի:
 Գըլխիս դառաւ ի՛ծի ցաւ:

Էս տարսը մարթս ուզեցի
 Կնիկ իմ օջախի համա,
 Ձէհէլ-ջըվան, կէկուցի.
 Վարթ բաց արած մահսվայ:
 Տօ, տաս թումանով ամիսը
 Հաց առնիմ իս, թէ միսը,
 Շամայ, ղուրգիէլ, դօշը,
 Թէ Ջվարիս-մամի լօշը:
 Կէկուցուս համա շուփկա,
 Կըրինօլին, թէ իուփկա,
 Յէպօշկա, սահաթ, բրօշկա,
 Թէ կալասկա ու դրօշկա: (Վարդանը ճարտար է
 Թէ Գրանից և Տնօնի կանգնած՝ լաս է:)
 Վի կալ ու դի տաս թուման,
 Մէկ էլ սարքած-կարքած տուն:
 Մագրամ աֆէրու՛մ, Վարթան.
 Վուճցոր մէ լաւ հուրսի շուն,
 Վուր կու շանց տայ ճամիէքը,
 Եկաւ, ասաւ ինձ թաքուն.
 «Փեսէտ թափից քու մուկը»:
 Ի՛ս էլ չը կորցրի վուխտը...
 Ախչկաս բաժընքի թուխտը,
 Վուճցոր տըւի իմ կամբով,
 Բաթըլ արի օրէնքով:

Տ Ե Ս Ի Լ Բ.

ԳՐԻԳՕԼ, ՎԱՐԹԱՆ,

ՎԱՐԹԱՆ, անցնելով բեմը:

Հուրսի շուն էլ շինեցի՛ր...

ԳՐԻԳՕԼ, չեբուխը ձեռքից վայր
ձգելով:

Վա՛, տօ՛, ինչ փիս վախեցրիր:

ՎԱՐԹԱՆ.

Ախալագլախ էտ գըլխին,

Գու պարուն կըռօ փեսին:

Պարտկիրըտ բաժնից խախին... (Գէպէ հասցի-
սականնէրը:)

Նամուս ունէ էրեսին,

Ձէր փուտը տուն չը դըրած...

Ա՛յ ձիզ մարթ ուսում առած:

Վիրքը ինքը փուտ մընաց:

ԳՐԻԳՕԼ.

Մինք լաւ խրիզ արինք ձեռաց: Մոտո՛ւ է
Վանէանցը յիջի դոնից:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԳՐԻԳՕԼ, ՎԱՐԹԱՆ, ՎԱՆԵԱՆՅ.

ՎԱՆԵԱՆՅ. Մօտենում է Գրի-

գօլին՝ և ձեռքը առնելով:

Ողջոյն ձեզ, հայր սիրելի,

Ինչո՛ւ էք այդպէս տխրած...

Դուք հիւանդ էք, երեւի,

Գէմընիդ է գունահատած: Անցնա՛ւ է «Եպանի
հոգիք, Գլխարկը դնա՛ւ նրա լրայ, յեանացնէրը հանա՛ւ, յգո՛ւ
Գլխարկն մէջ և վերադառնա՛ւ իւր պէլը:

ԳՐԻԳՕԼ, առանձին:

Աբա՛, Գրիգօլ խիլք ունիս,

Էջը ցրխեմէն հանէ: (Գէպէ Վանէանցը):

Ուրախութիւնըս դուն իս:

ՎԱՐԹԱՆ, կողմնակի, դէպի
Գրիգօլը:

Ախպէր, լաւ քօփակ շուն իս:

ԳՐԻԳՕԼ, դէպի Վանէանցը:

Խօմ՝ գիդիս, հաստատ բան է...

Ախար, օխտն օր է գալի,

Միր կըռնէն չիս անց կացի: (Մասնանիշ անէ-
լով Շաշնիայի «Ենէանի դոտն լրայ»):

Նրան ի՛նչ ջուղաբ իս տալի...

Բա՛ս, դուն ջէր էտի կացի: Դո՛ւր է գնա՛ւ
Յա՛ն դոնից:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՎԱՐԹԱՆ, ՎԱՆԵԱՆՅ.

ՎԱՐԹԱՆ, շողմաբար:

Ի՛ս խօսկ չ'ունիմ՝ ասելու...

Օղլուշաղըս ծամելու

Թիքայ չ'ունէր միթանը:

Էսօր, պարուն, ձիր շնուրքով

Փուղաուր է վարթանը,

Ու բախտաուր մէ խօսկով:

Վ Ա Ն Ե Ա Ն Ց .

Մի առաճ ասեմ՝ ես ձեզ՝
 Քամուն բերած կոյտ, թէ դէզ
 Քամին կը տանի նոյնպէս:
 Գիտցիք եւս՝ ինչ ցանէք,
 Այն դուք անշուշտ կը հնձէք: Սկսած է շրջել
 քէճի կրայ:

Վ Ա Ր Թ Ա Ն , դէպի հանդիսական-
ները:

Ինքն է քամու տարածը,
 Ինձ կի խնաց է անուժ:
 Այ, ձիր ուտում առածը
 Ախար, սրանցն ի՛նչն իք հաւնում: Գո՛րս է
 քնսած աջ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Ե .

Վ Ա Ն Ե Ա Ն Ց .

Արդէն երկու տարի է,
 Գիշեր-ցերեկ կ'աշխատիմ...
 Արդեօք վերջը բարի է,
 Ձը գիտեմ եւ կ'երկմտիմ:
 Մի բոց, մի հուր ինձ կ'այրէ,
 Կ'այրէ, սիրտս տոչորէ...
 Մերթ մնայլ մի երկբայանք
 Թունաւորէ խելքս, կեանք...
 Եւ մերթ ուժգին մի սառսուռ
 Մարէ երակներիս հուր...
 Եւ խելքս կը դադարի
 Որոշել չար կամ բարի:

Սէրն է հիմն հաւատոյ,
 Համբերութիւնն կեանք է,
 Իսկ յոյսն՝ մոլոր մարդոյ
 Նեցուկ եւ զօրեղ ղեակ է:
 Սիրիւր, համբերիւր, յուսա՛, (Գո՛րսն է իմ ձեռք):
 Դու ծաղրած, խաբուած փեսայ:
 Ինքն ալեւոր ծերունի,
 Անդամաւոյժ, ցաւագար,
 Կը պսակուի, կլին կ'առնի,
 Աղջկան կը տայ խորթ մայր, (Հե՛ գնօրէն):
 Իսկ պատուական փեսային՝
 Պարտքերը կը հաստատէ,
 Կը խաղայ Քաղբի օին...
 Եւ կայքերից կը զրկէ
 Իւր որբ, խոնարհ աղջկան:
 Ո՛ւր է գուլթն հայրական,
 Ո՛ւր մարդկային խղճմտանք... Մարսած էն Գրէ-

գօլը և Եաշինկան յախ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Ձ .

Վ Ա Ն Ե Ա Ն Ց , Գ Ր Ի Գ Օ Լ , Հ Ա Շ Ի Ն Կ Ա .

Գ Ր Ի Գ Օ Լ , ինքը հագնուած՝ Հա-
 շինկայի ձեռքը բռնած ներկայացնելով Վանեանցին:
 Չասիս թէ փրթած ապրանք
 Էսօր քիզ վրայ իմ սախցնում...
 Ունէ սիրուն կիրպարանք,
 Վուր մեռիլ է կենթնացնում:
 Մըտիկ սրա աճկ ու ունքին,

Բօհն ու բուսաթը տիս.
 Գանա էլի ուրումքին
 Դուն սրա հատը տեսած իս:
 Վուտով, գըլխով դիւի քունն է,
 Ուտեցրու, հաքցրու, պահէ,
 Էս օջախը քու տունն է...

Իմ պառաւ սիրտն էլ շահէ: (Տալով Շաշինկայի
 յետքը Վանեանցին՝ ինքը անցնում է Բեմի առաջ, իսկ Վանեանցը՝
 Շաշինկայի հետ է մեանն — դեպի Բեմի խորքը և
 նստելով ախոռների վրայ խօսակցում են, ուրիշ զրոյքներով
 Գրեգօյն վրայ):

Էհէնց էլ մինձ ախշրկաս
 Վաղ գըլխեմէս ուղ առի,
 Ասի՛ գընա՛, յիդ չը գաս,
 Վէքսիլը թաթը գըրի:
 Մէկ նա տարաւ ծալ-ծալը,
 Մէկ էլ խօմ սա կու տանէ:
 Անմիդ է գընալ գալը...
 Մօխէրխէբէն մինձ բան է: (Մասնանիշ անելով
 Վանեանցի վրայ):

Ինքը մարթ է ունեւոր,
 Կէհան ժամը, կու փսակին
 Ու կու դառնան բախտաւոր.
 Աէրով մէտի կու սպրին:
 Ղուլուղը օրինաւոր.
 Ձին ունէ, շլապա ու թուր: (Բարձրաձայն):
 Ամէն բանն է առուտուր...

Վ.Ա.Ն.Ե.Ա.Ն.Ց, առաջ գալով:

Հայր իմ, մեզ կը հրամայէք:

ԳՐԻԳՕԼ:

Ձէ, դուք էտի քէփ արէք...
 Վաղուցայ մարթ իմ, վորթի,
 Միտս էկաւ ամբըրնիրըս,
 Հակնիր բամբկի ու բըրթի.
 Աշլա էլաւ դարդիրըս:

Վ.Ա.Ն.Ե.Ա.Ն.Ց.

Դուք տեսած էք մեքենայ,
 Որ բուրդ, բամբակ կը մանէ:

ԳՐԻԳՕԼ, մատնանիշ անելով
 Շաշինկայի վրայ:

Ձէր մէ դուն նրա մօդ գընա՛: (Դեպի հանդիս
 սանտաները):

Հիմի գլուխըս կու տանէ: Մասնում է Աօլմանը
 Տեղի դանից և սպառ շայնում Տեղի Գրեգօյն, Տեղի Վանեանցի վրայ:

Վ.Ա.Ն.Ե.Ա.Ն.Ց.

Ձարմանալի մեքենայ,
 Գործում է թաթման, գուլպայ...

ԳՐԻԳՕԼ, իւր ճակատին ձեռքը
 սալով:

Էս մաշինէն արմըցի,
 Գործում է արլարուդա՛: Միթաղում է:
 Վ.Ա.Ն.Ե.Ա.Ն.Ց, դեպի Շաշինկան,
 որ մօտենում է Վանեանցին:

Ձեր հայրը կը կասկածի,
 Որ այսպէս խիստ կը խնդայ: Մասնում է Մայեան:
 յախ դանից:

Տ Ե Ս Ի Լ Է:

ՆՐԱՆՔ, ՄԱՅԵԱ:

ԳՐԻԳՕԼ:

Ձէ, վուրթի ջան, չէ, փեսայ,
Ուրիշ բան իմ ծիծաղում...
Էրէգ մէ օմքին տեսայ,
Մէ դուն ո՛ր իս նիղանում:

ՄԱՅԵԱ, դէպի Վանեանցը:

Ախար, իս քիզ իմ մընում:

Վանեանցը՝ առաջարկելով ընդ Շաղինկային՝ Մայեայէ
էնքա իմասին քո-քո էն գն-ճ յախ քո-նից:

Տ Ե Ս Ի Լ Ը:

ԳՐԻԳՕԼ, ՍՕԼՕՄԵՆ:

ՍՕԼՕՄԵՆ, առաջ գալով: Հեգ-
նօրէն:

Թէ ախպէր իս, կէս դուժին
Ասա, մէ էտ քու գըժին,
Վուր ինձ (Հ)ամա էլ գործէ:
Կանչէ էլի, մէ փորցէ,
Ի՞նչեմէն իս վախենում:
Քիզմէն թախած աթմորթի,
Ձեռնեմէտ ո՛ր է գընում:
Կանչում իս փեսայ, վուրթի...
Ախար, վո՛ւնց չ'իս ամանչում:

Մագրամ զարարտ ի՛նչ է:

Էտ էլ խօս փուղի բան չ'է:

ԳՐԻԳՕԼ, գոռողարար:

Ի՛նչ նամաղուլ իս անում:

Միջի ջուրը չ'իս հանում,

Քար ո՛ր իս խըփում կըժին: Նապօն և Մալալը
Տըն-ճ էն աջ քո-նից:

Տ Ե Ս Ի Լ Ք:

ԳՐԻԳՕԼ, ՍՕԼՕՄԵՆ, ՆԱՏՕ, ՄԱԼԱԼ:

ՆԱՏՕ, մատնանիշ անելով Գրի-
գօլի վրայ, հեգնօրէն:

Մըտիկ տըւէք էս գըժին:

Միտին ու ուղ'ուփը գըլխին

Կայանքը վո՛ւր Քախկըցին

Վիր է կալի դիփ մէտի

Ու տըւիլ է իր փեսին:

ՄԱԼԱԼ, ըստի առաջ, մատնանիշ
անելով Սօլօմանի վրայ, առանձին:

Վի կախիս մէ լաւ կէտի

Գիփ գըլխին ու էրեսին:

ՍՕԼՕՄԵՆ, դէպի Նատօն:

Գուն էտունցը մի աւաա. (Գրիգօլի վրայ Տապ-
նանիշ անելով):

Ձը խըլէ, թէ չ'է՛ չ'ի տա:

Կաց քի համա արխալին:

ՄԱԼԱԼ, մատնանիշ անեղով Սօ-
լոմանի վրայ, առանձին:

Օհնի վրայ օհն.

Հիմի շուշպար է խախցնում:

ՆԱՏՕ, դէպի Գրիգօլը:

Էտունք էիր խոստանում...

Գլուխըս ո՛ւր էիր կրտրում:

Կնիկըս դրուտտ եարսուն տարի

Նըստում իմ վուրփեւէրի,

Մարթ ուզիմ դամբլա—կակի,

Մէ մատը միզրը դառնամ

Ու մասխարա միր Քախկի.

Քիմէն էս խէրն ունենամ.

Մարթ հարցնէ ինչի՞ համա:

Տանն էլ ունէի թիքայ...

Ախպումը հուլունք գըթայ:

Էրնէկ իմ աճկի լրտին,

Նատօին էլ սազ գու՛քայ:

Հիմի տիս, ինչիր կ'օօին,

Գիմցի միր ատա-կօսին:

ԳՐԻԳՕԼ:

Էսօր խօսկ խօմ չ'իք կապի՛,

Գիփ ինձ (հ)ամա իք պարպի՛:

Գուն էլ ունիս իշտահի,

Ուզում իս սիրտըս շահի՛:

ՆԱՏՕ:

Մուլքտ է էլի գանգտումը,

Ինձ վրայ էիր հաստատում:

ՍՕԼՕՄԵՆ, հեգնօրէն:

Սա միզ չ'ունէ էտումը...

Նահախ տիղն ո՛ւր իս սրտում:

ՆԱՏՕ, դէպի Սօլոմանը:

Գուն ծիծաղի սրրտալի,

Սա մինձ թանխէք էր տալի...

Ի՛ս էլ խօմ թամահ արի:

Գուս էկաւ՝ գամդէլ դառի...

Նատօին էլ կու սազ գայ: (Ի՛էպէ Գրիգօլը):

Անգճիտ բամբակը հանէ,

Ախջրկաս ջանը դուս գայ,

Նըստի, տիրութի՛ն անէ:

Գրուտ դրապէսնիրն ին նըստած...

Գիփ փուղով ու բաժընքով,

Ռանգի-դիգարը դարսած:

Ի՞նչ է, տանրտ հարընքով

Շատ հիւրնդնիր ին պառկած:

Ի՛մ էս տանը տուն գալը

Ինչ չուտ սրրտին քացխեցաւ...

Հրամանքներու դուս տալը

Օջախումը պակսեցաւ:

Հիմի դուն տիս նրա հալը,

Թէ վճնց իմ գալի օֆթէմէն...

Իմացի, էս օրւանեմէն

Էս օջախի ջիւալը

Առնում իմ նրա ձեռնեմէն:

Իհստ փիսն իմ, թէ խիստ լաւը,

Ի՛ս իմ էստի տանդիկին:

Թէ գըլխիս չարայ չ'արի.

Տունըս դիւի կու գարգըկին:

ՄԱԼԱԼ, տռանձին:

Իժում գուն գըթի գուղը:

Սուգերումը ման արի,

Ինչկի մրտնիս սիւ խուղը:

ՆԱՏՕ, գէպի Գրեգօլը:

Ախշրկատ մարթու տալը

Քու բանը չ'է, գիղենաս: (Իէպէ Սօլօմոնը):

Էստի քու գընալ-գալը,

Թէգուզ խիստ էլ նիղանաս,

Ինձ չ'է դուր գալի, պարուն:

Մէկ էլ խիստ լաւ կ'օնէիր,

Վունցոր նրան ճարեցիր դուն,

Մէ բան մօգօնիլ էիր,—

Էն քու նուգբար փեսացուն

Մէ թահար ցանիլ էիր

Հիուու էսղ'անց, մէ ուրումքին: (Իէպէ Գրեգօլը):

Յօրէսի գէնը էս տանը

Առանց իմ հրամանքի օմքին

Ձը կանենայ իմ գրոանը

Մօգ գա, վուտը գընէ շիմքին...

Օչով չը գիւիչի իմ կամքին: Դու-ն է գնս-մ

աջ գրանից, Մայալը հեպուս-մ նրան:

Տ Ե Ս Ի Լ Ժ:

ՍՕԼՕՄԱՆ, ԳՐԵԳՕԼ:

ՍՕԼՕՄԱՆ, Հեգնօրէն:

Պնիկ իմ ուզում... շատ բարի...

Ռաստ էկար քահրուբարի:

Այ, քի պատիժ պատուհաս,

Էրկու օրւայ նորահարս:

ԳՐԵԳՕԼ:

Մախլաս, մախլաս ու մախլաս...

Գընանք, քիչ գլորինք նարդի:

ՍՕԼՕՄԱՆ:

Մըհլամ է մարթու գարդի:

Վարագայրը եղնս-մ է:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ:

Բենք ներկայացնում է մի շքեղ դահլիճ իւր բանգագին կան-կարասիքով: Աջ՝ երկու դուռը եւ մի մարմարեայ վառարան. ձախ՝ մի դուռը, իսկ խորքում՝ կամար, որ միանորում է դահլիճը հիւրասենեակի հետ:

Բենի ձախ կողմը՝ մի փոքրիկ գահաւորակ իւր բազկաբոռներով եւ, ուր հարկն է, արուներ: Աջ կողմը՝ փոքրիկ սեղաններ, արուներ եւ վառարանի վրայ ժամացոյց, որի սլաքները ցոյց են տալիս ժամի 12, իսկ խորքում, կամարից աջ եւ ձախ՝ զոյգ հայելիներ, որոնց առաջ դրած սեղանների վրայ կանդեյեաբրի մոմերը վառած են. անկիւններում՝ մարմարեայ պատուանդանների վրայ ապակիով ծածկած արուեստական ծաղիկներից փնջեր եւ, ուր հարկն է, արուներ: Աջ եւ ձախ պատերից կախուած ջաների մոմերը վառած են: Լուսաւորած է եւ հիւրասենեակը, ուր սեղանի շուրջը նստած չորս հոգի զբաղվում են բոբախաղով եւ նկատելի են հանդիսականների կողմից, նմանապէս եւ սենեակի կան-կարասիքը՝ գահաւորակը, սեղանը եւ բազկաբոռները:

Տ Ե Ս Ի Լ Ա:

Վ Ա Ն Ե Ա Ն Յ, Կ Ա Տ Օ, Վ Ա Ր Գ ՈՒ Հ Ի, Հ Ա Շ Ի Ն Կ Ա, Մ Ա Բ Ի Պ, Է Փ Է Մ Ի Ա շրջում են դաշլիճում: Յաճախակի դաշլիճով անցնում է Մայեան սենեակից սենեակ. նմանապէս և Վարդանը, որ երբեմն մտնում է հիւրասենեակը և նստում թուղթ խաղացողների մօտ: Մի անգամ մտնում է ծառան և արծաթեայ մատուցարանով առաջարկում քաղցրաւենիք հիւրերին:

ՀԱՇՏԻՆԿԱ, ՄԱԻԿՕ, ԹԼ ԹԼԻ տուած

անցնում են բեմի առաջ:

ՄԱԻԿՕ.

Ա՛խ, էրնէկ քի, Շաշինկայ,

Վուր դուն էտ բախտը նընգար.

Լաւ տուն ու տիզ, կալասկա,

Վո՛ւնց սկեսուր ու վո՛ւնց սկեսար:

Մարթուտ էլ խօմ խօսկ չը կայ...

Գովում ին, Աստուծ վրկայ: Անցնում էն աջ
կողմից դեպի յախ, ետէ էփէֆան և Վարդուհին՝ նրանց հա-
չառակ կողմը՝ յախից աջ, նմանապէս ըն ընէ պոստի:

ԷՓԷՄԻԱ.

Ասին՝ թուխտ խաղացող է:

ՎԱՐԴՈՒՆԻ.

Լսեցի՛ արբեցող է:

ՀԱՇՏԻՆԿԱ, բեմի առաջ կանգ
առնելով:

Բաս նրա հատը քի ոստո գայ:

ՄԱԻԿՕ.

Ի՛փ ժամանակը գու՛ քայ...

Ի՛ս արիցար մարթ գուղիմ,

Էքսիլթանդնիր ունենայ,

Կրուժօկ, թիատր վազվրզիմ,

Քանի քէփըս ուզենայ:

Ի՛էնչիկը գուանս կանգնած՝

Տուն ու տիզըս պահպանէ,

Ի՛փոր իս կու լիմ քընած,

Օչովին պրիմիտ չանէ: (Մօպեռնոս է նրանցը
վանէանցը):

Էրեխանցըս Ռըսէլար

Կու սովրեցնիմ իս տանը,

Հաէլար, Վրրացէլար

Չ՛իմանան անն ու բանը:

Գուվէրնանկի հիզ իժում

Բուլլարը կու զրգիմ իս

Իգրուշկա—էկիպաժում

Իմ դիփունի պըստըկիս: (Հեֆնօրէն):

Մարթ ուղիմ... էն էլ շտացկի՛.

Նրանց համա խիլքըս գընճում...

Ման գամ նրա հիզ պագրուչկի,

Աբա, մէ ի՛նչ իմ անում: (Հրճուստիւ):

Ափիցըրի հիզ ման գալիս՝

Ի՛ունկեր ասիս, սալդաթը

Ձեռը ճակտին չէստ կու՛ տայ:

Ի՛էնչիկիս հիզ խօսելիս՝

(Կու սիրիմ՝ նրանց աղաթը),

Ի՛նձ. «սլուշայուս» ձէն կու՛ տայ:

Ի՛ս էս օրին իմ մընում: Անցնում էն Էփէֆ աստը:

ԷՓԷՄԻԱ, դէպի Վարդուհին, բե-
մի առաջ անցնելով:

Տիս, թէ վո՛ւնց է քըրքըրվում՝

Ռէտիանինց ախչիկը,

Սովրիլ է Ձավէդէնում...

Հօր գըջըլտած լափչիքը

Աուչիւն օջով չէ դընում: Անցնում էն:

ՎԱՆԵԱՆՑ, մօտենալով՝ դէպի
Մաիկօն:

Գիտէք, արտասահմանում՝

Օրիորդներն այժմեան

Կեանքին այդպէս չ'են նայում,
 Որպէս դուք ամուսնութեան,
 Կամ կանայք որդոց ուսման
 եւ դաստիարակութեան: Մօտինսմ է նրանցը
 Կարօն:

ՄԱԻԿՕ,

Մինք էլ առակ ու ռաման
 Շատ ինք էստի կարթացի:

ԿԱՏՕ.

Օվ չ'ունէ հազար թուման,
 Տանը նրստած է քացխի:

ՎԱՆԵԱՆՑ, դէպի Մաիկօն.

Կ'երեւի, որ շատ ռաման
 եւ առակ էք կարդացած...
 ձաշակ ունիք անման,
 Իսկ խելք չ'ունիք զարգացած:
 Ռամանի է հետեւանք՝
 Կավայեր եւ շուայլ կեանք,
 Թաւշեայ հագուստ, զարդարանք,
 Զոյգ նժոյգ եւ զբօսանք,
 Կահ-կարասիք ոսկեզօծ,
 Վիեննայից շքեղ կառք:

ՄԱԻԿՕ.

Էնդ'անց մէ նէմէնցի քօծ
 Կ'ունենայ ձիր հաւնած վարք:

ՎԱՐԴՈՒՀԻ, մօտենալով նրանց,
 դէպի Մաիկօն.

Դուք խելացի աշխատանք,
 Արհեստ, ուսում լսած կնք:

ԿԱՏՕ, յուզուած.

Մինք գին դընող չը տեսանք,
 Անմիղ էտէնց ի՛վի էկաք:
 Ախրկայ աճկն ու ունքը,
 Հազար թումանն ու մուլքը.
 Օ՞վ է չափում նրա խիւքը:
 Գուք էլ իք ուսում առած.
 Տատ ու դօխտուր իք դառի,
 Մագրամ ջէր տանն իք նրստած
 Յօրէսայ օխտը տարի:

ԷՓԷՄԻԱ, յոգևոց հանելով ա-
 ռանձին.

Մէ օր իս էի գոված...
 Քացխի քաղաքավարի.
 Վ'ունց գիժ, վ'ունց ուսում առած,
 Դիփունցը ջուրն է տարի:

ՎԱՐԴՈՒՀԻ, դէպի Կատօն.

Խնդրեմ ներէք ինձ, տիկին,
 Եւրոպ օրիորդ, թէ կին
 Աշխատանօք են ապրում,
 Ո՛չ ոք նոցա նախատում,
 Այլ յարգում, գնահատում:
 Իսկ այստեղ դուք աշխատում
 Շուտով գտնել ամուսին...

ԿԱՏՕ.

Ներիք, ձիր խօսկն իմ կըտրում.
 Էնդ'ացիքն աննամուս ին,
 Նրանք ուրիշ բան ին պրտում...
 Էրնէկ իմ աճկի լըսին,

Ղուր իս ակնչիկ մինձացնիմ,
 Դրունէդուռը ման ածիմ,
 Թրիատրոււմը նրան խախցնիմ,
 Էնդով թիքայ ուտեցնիմ:
 Չ'է, էտունք միզ չ'ի սաղ գա,
 Մինք տանը կու նրստեցնինք.
 Իմ մարթու ջանը դուս գայ,
 Թո՞ղ թափէ արուն քրրտինք
 Ու ակնչրկաս մարթու տայ:
 Բաթընքում հիզըս չ'իմ բերի,
 Ի՛փոր վուր նա ինձ ուղից,
 Դառաւ օղլուշաղի գերի:

ՎԱՆԵԱՆՑ.

Մի՛թէ իգական սեռի
 Յատկութիւնքն են միայն՝
 Ամուսնոյն առնել գերի
 Եւ թունաւորել համայն
 Մի սերունդ եւ ընտանիք...

ԿԱՏՕ.

Ի՛հ, քանի գլուխըս տանիք: (Անցնելով Եփէօնայէ

հողմը՝ նստում է նրա ձօք և հետը իօսակցում:)

Դուն ի՞նչ լաւ կու ճանչնաս.
 Քաշիլ իմ ակնչրուութիւն,
 Մինձացրիլ իմ ակնչրկաս...

ՎԱՆԵԱՆՑ, դէպի Կատօն.

Կրօն, լեզու, ազգութիւն,
 Երբ ձեր աղջիկն էր տհաս...

ԿԱՏՕ.

Ախչիկը լաւ կընգութիւն

Իր մարթուն պիտի անէ,
 Մէ քիչ էլ տանդիկնութիւն,
 Օջախը եօլլա տանէ,—
 Էտունք աւելնուրթ բան է: (Իէպէ Եփէօնայէ):
 Ախչիկըս ֆօրտուպիան
 Ածում է խիստ արմաղան,
 Խօսում է լաւ Որսէրէն,
 Գիդէ սիրուն տանցալատ:

ՎԱՆԵԱՆՑ.

Գրել, կարգալ հայերէն,
 Ի հարկ է, ամէնից վատ:

ԿԱՏՕ, յուզուած, մատնանիշ

անելով Վարդուհու վրայ.

Դրա գըլխին կարթն խրրատ...
 Ղուրթ է, խիլքով ինք ակնչատ,
 Մագրամ նամուսով հարուստ,
 Դրունէդուռը չ'ինք նընգած,
 Ունինք մէ քիչ էլ ապրուստ:
 Բախտը գու՛քայ, իմ հաւնած
 Օմքին կու ուստ գայ զանգին...

ՎԱՆԵԱՆՑ, հեգնօրէն.

Դուք էլ կը յիշէք Աստուած
 Եւ ձեր աղջիկն անգին...

ՎԱՐԴՈՒԷԻ, հեգնօրէն.

Կը լինի ամուսնացած...

ՎԱՆԵԱՆՑ, հեգնօրէն.

Եւ հարկաւ բաղդաւոր կին...

ՎԱՐԴՈՒՀԻ, ՀԵՂՆՈՐԷՆ:

Չանգինի է ամուսին: Մտնում է Մալժոն, որին
դիմում է Շաշինկան, հուրժախն համբուրում և պեղա-որում
Բաղկալուսի իրայ: Մի-սնեբը ևս յարգանքով ողջունում էն:
Մալժոյ հետ մտնում էն՝ Վարդանը, Նարոն և Մալալը:

Տ Ե Ս Ի Լ Բ:

ՆՐԱՆԷ, ՄԱԹՕ, ՎԱՐԹԱՆ, ՆԱՏՕ, ՄԱԼԱԼ:

ԿԱՏՕ, դէպի Վանեանցը:

Քիզ էս դիփուկը կ'օսին՝
Կնիկարմատն է բախտաւոր,
Ի՛փ ունէ մարթ փուղաւոր:

ՄԱԹՕ.

Ասածտ է օրինաւոր:

ՎԱՆԵԱՆՑ, դէպի Մաթօն:

Ո՛չ, խնդրեմ ներէք, տիկին,
Երջանիկ է մարդ, թէ կին,
Երբ ունի նա ուսում, բարք...
Հարստութիւնն չ'է փառք,
Ո՛չ տնանկութիւնն արատ.
Առած է այս եւ խրատ:
Եղէք դուք հոգւով հարուստ...

ՄԱԻԿՕ.

Ձիր ասածնիրն է խիտ դրուստ,
Մագրամ... փուր էս միր-Քախկի
Թէ տղերքն ու թէ ախջրկիրք...

ՎԱՆԵԱՆՑ.

Բոլորեքեանք ունին կիրք՝
Պաշտել զարծաթ եւ զոսկի,
Եւ չը գնահատել ձիրք
Փափկասուն օրիորդի,
Որ պատկեր է հրեշտակի...

ԿԱՏՕ, քարշելով Մաիկօին դէպի իւր
կողմը:

Ի՛ս քիզ ասիլ իմ, վո՛ւրթի...

ՎԱՆԵԱՆՑ, դէպի Վարդուհին,
Մաիկօյ մասին:

Արժանի խիտ կատակի:

ԿԱՏՕ, շարունակելով խրատել
իւր աղջկան:

Տրդամարթու հիզ փսակի
Վուխտն էլ չը պիտի խօսի
Մարթու տալու ախջրկը,
Վուր չը չափին նրա խիւքը
Ու բամբասին մարթիքը:

ՄԱԻԿՕ.

Էտունք մօղէմէն գընաց,
Հարկաւոր չ'է խրատը:
Հիմիկիայ ախջրկերանց
Խիւքը մինձ է ու սիրտը...
Նուր ուսում առած տղերանց
Մինք ուփրօ գիղինք փանդը,
Նրանց սրբոտի ցաւն ու դարդը: Թաղնէլով Կա-

թօն՝ անցնում է Վանեանցի կողմը:

ՎԱՆԵԱՆՑ, դէպի Մաիկօն:

Գիտէք, ազնիւ օրիորդ

Ս.ռօրեայ կեանքի մասին
 Գաղափար ունիք շատ խորթ.
 Լինել միայն ամուսին,
 Չ'է այդ մեծ երջանկութիւն,
 Ծնել որդիք, որպէս կին,
 Ոչ այդ է հերոսութիւն:
 Կողակցին՝ ընկերակից,
 Զուժ կենաց քարշել կից,
 Որդւոց՝ կրթիչ, մնուցիչ,
 Նոցա դաստիարակիչ...
 Պարտաւորութիւնն կնոջ
 Կատարած կրկնիք ամբողջ:
 Լինիլ համապատասխան
 Մի այսպիսի պահանջման,
 Չ'է հետեւանք այն ուսման
 Եւ կեղծ լուսաւորութեան,
 Որով կը հպարտանաք:

ԿԱՏՕ.

Խիստ էք սիրում դուք հանաք:

ՎԱՆԵԱՆՑ.

Երբ ձեզ պէս կանայք, մայրեր,
 Անդամ հասարակութեան
 Կը լինին հիման քարեր,
 Գաղափար ամուսնութեան...

ՄԱԹՕ.

Դուք խօսում էք արմաղան,
 Շատ խելօք ու պատական...
 Մագրամ միզ չ'ին դուրեկան
 Հիմիկւայ ուտում առած

Տրդէրքն ու ակնըկիրքը.
 Կ'օսիս թոկեմէն փախած՝
 Կորցրիլ ին իրանց խիւքը:
 Քախկի քանդուելուն մըտիկ:
 Էլ վունց մինձ կայ, վունց պըստիկ...
 Զուրս վուրթու իս դէդա իմ,
 Ախար, նրանցն ինչը գովիմ:
 Մէ ակնչիկը Գայանանց
 Նկոյումն է ուտում առած,
 Վունցոր վարպիտ կըսանանց
 Գիշիր ու ցերեկ նըստած՝
 Հաէւար գիր էր կարթում,
 Շուրիւր հաքաւ կարկրտնած
 Ու փախաւ գընաց Բաթում,
 Վուր թուրքացած հաէրուն
 Հաւատ, լիզու սուրեցնէ,
 Կարթացնէ նրանց լակտներուն...
 Օջախիս լաքա կըպցնէ,
 Միզ տընով-տիզով կորցնէ:

ՎԱՆԵԱՆՑ.

Դարնեայ պսակի է արժանի
 Թէ օրիորդ, թէ պատանի,
 Ոյք դառն քրտամբք կ'ուռոգեն
 Խոպանացեալ հոգն հայրենի,
 Համեստ աշխատանք կը զոհեն
 Հերկել, ցանել սերմ գիտութեան
 Յանուն եւ յօգուտ ազգութեան:

ՄԱԹՕ.

Վոյ, անգճնիրըս խըլանայ,

Էտէնց խօսկիրք չ'իմանայ:

Օ՛ղ գիգէ, խիխճ ախջրկան

Էտունք էին խըրատում:

ՎԱՆԵԱՆՑ:

Հերոսուհի աղջկան

Անմեղ էք դուք նախատում: Մարնս՝ է Ադա-է-
«Էանցր:

Տ Ե Ս Ի Լ Գ:

ՆՐԱՆՔ, ԱՂՈՒԷՍԵԱՆՑ, Հիւրասննեակից
դուքս գալով:

Pardon,⁽¹⁾ յանցանք քրէական...

Ո՛չ, ո՛չ, ես որպէս փաստաբան

Կամիմ լինիլ նորա պաշտպան,

Որպէս հմուտ իրաւագէտ

Քննել գործը կէտ առ կէտ.

Թէ յանցաւոր, կամ թէ արդար:

Միայն լինի մեծ ғонораръ⁽²⁾

И дѣло въ шляпѣ⁽³⁾ անպատճառ: (Երգէ-
լով անցնս՝ է Վարդուհու-հու-հուգր:)

La donna e mobile...⁽⁴⁾

ՄԱԹՕ, դէպի Վարդանը:

Քան, ծվ է սա, գրժւիլ է:

ԱՂՈՒԷՍԵԱՆՑ, դէպի Վարդու-

հին, որ նստած շալ է գործում:

